ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 05.02.2013թ. 3/7-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման կարգ»-ի 2.2 և 3.4 կետերի պահանջներով,

հաշվի առնելով փաստաբաններին վերապատրաստել ցանկացող հաստատությունների (կազմակերպությունների) կողմից Պալատին ներկայացվող հավաստագրի, ինչպես նաև հավատարմագրված հաստատությունների (կազմակերպությունների) կողմից Պալատին ներկայացվող տեղեկանքի ձևը սահմանելու անհրաժեշտությունը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- ***սահմանել փաստաբանների վերապատրաստում իրականացնելու համար հավատարմագրվել ցանկացող հաստատությունների (կազմակերպությունների) կողմից Պալատին ներկայացվող հավաստագրի ձևը և բովանդակությունը համաձայն հավելված 1-ի.***
- ***սահմանել հավատարմագրված հաստատությունների (կազմակերպությունների) կողմից Պալատին վերապատրաստված փաստաբանների վերաբերյալ ներկայացվող տեղեկանքի ձևը և բովանդակությունը համաձայն հավելված 2-ի:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

24 **մարտի** 2014**թ**.
թիվ 122-**Լ**
ք.**Երևան**

Հավելված 1՝
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 24.03.2014**թ. թիվ**
122-**Լ Որոշման**
նախագահ՝
Արա Զոհրաբյան _____

_____
(կազմակերպության կամ հաստատության անվանումը)

_____
(կազմակերպության անունից հանդես եկող անձի անունը, ազգանունը, պաշտոնը)

_____
(կազմակերպության կամ հաստատության հասցեն, ՀՎՀՀ-ն, իրավաբանական անձի պետական գրանցման համարը)

_____
(կազմակերպության կամ հաստատության հասցեն և հեռախոսը)

« »_____201__**թ.**

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Սույն հավաստագրով _____ը (**այսուհետ՝ Հաստատություն**) հավաստում է, որ փաստաբաններին վերապատրաստելու հավատարմագիր ստանալու դեպքում փաստաբանների վերապատրաստումն իրականացնելու է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշումներով հաստատված թեմաների շրջանակում և վերջինիս հաստատած չափանիշներին համապատասխանող դասավանդողների միջոցով:

Սույնով Հաստատությունը հաստատում է, որ ունի (սեփականության կամ օգտագործման իրավունքով) վերապատրաստում իրականացնելու համար անհրաժեշտ տարածք և տեխնիկա:

Հաստատությունը պարտավորվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա տասը ՀՀ փաստաբանների պալատին ներկայացնել վերապատրաստված փաստաբանների վերաբերյալ տեղեկանք՝ առանձին նշելով վերապատրաստման թեմաները, դասավանդողներին և ժամաքանակը:

Հաստատությունը համաձայնվում է կատարել ՀՀ փաստաբանների պալատի կողմից վերապատրաստման վերաբերյալ ընդունվող բոլոր ներքին իրավական ակտերի պահանջները:

_____
պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն, կնիք